ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/265-21 առ "04" 02 2021թ.

Ձեր № _____ առ "___" _____ 2021թ.

{№01/145 առ 09.06.2020թ. պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ}

«Անգել» ՍՊԸ-ի
տնօրեն՝ տկն. Ա. Վանեցյանին
E-mail: fabrika1988@mail.ru

Հարգելի տիկին Վանեցյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար հանդերձանքի (այսուհետ՝ ապրանք) ձեռք բերման նպատակով ս/թ ապրիլի 28-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, «Անգել» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2020թ. հունիսի 09-ին կնքվել է թիվ 01/145 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Նշված Պայմանագրով մատակարարվող 26-րդ չափաբաժնով սահմանված 45 հատ խալաթները, որոնց ընդհանուր գինը կազմում է 270000 (երկու հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամը՝ «Անգել» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է պայմանագրի պահանջների խախտմամբ՝ հիմք ընդունելով «ՍԻՍՏԵՄԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված թիվ 2-20210115-2 առ 15.01.2021թ. փորձարկման արձանագրությունը:

Համաձայն Պայմանագրի՝

- 2.4.1 կետի «Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով»;
- 2.4.2 կետի «Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետի համաձայն»;
- 2.4.4 կետի «Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով»;

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Անգել» ՍՊԸ-ի հետ 2020թ. հունիսի 09-ին կնքած թիվ 01/145 պայմանագիրը 26-րդ չափաբաժնի մասով, և տեղեկացնում ենք, որ չմատակարարված ապրանքների մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվի նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք սույն գրությունը ստանալուց հետո 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում ետ վերցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ մատակարարված խալաթները:

Առդիր՝ թիվ 2-20210115-2 առ 15.01.2021թ. փորձարկման արձանագրության պատճեն – 2 էջ:

Գլխավոր տնօրենի ժ/պ՝ **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝ Վ. Մանուկյան
ԳԲ 2-րդ կարգի մասնագետ
+374 10 28 29 60